

Դեմքեր վըտիտ, բիբեր ջերմի վառարան,
 Որ փոխանակ արեգակին կը տեսնան
 Յըրդեհն իրենց գիւղերուն.
 Լանջքեր վիրոտ, վիրոտ սըրտեր՝ լի արդար
 Վըրեժներով, սարսափներէ խելագա՛ր,
 Ճակատներ՝ ուր թըշնամւոյն
 Անարգ սուրերը կ'արձակեն բոց եւ ահ,
 Յոն կը գըրեն - ըստ կամքի - կեանք, վաղը՝ մահ,
 Ճակատագիր անկայո՛ւն...
 Ջարդուած կողեր՝ որ կը դողդղան սուհիներէն՝
 Ինչպէս եզ մ'իր անդէորդին խըթանէն.
 Յուրտի, սովի մէջ՝ դեղին
 Ծիւրախտ թոքեր, աղիքներ չոր ու ցամբած՝
 Որոնց միջեւ Քաղցն, երիզորդ մարմնաքանց,
 Կը քաշէ մորթը ոսկրին:
 ...Ահա - ո՛վ վրեժ - եղբայրներուդ այս անվերջ
 Քայքայումին առջեւ՝ սըրտմիտ, հոգւոյդ մէջ
 Խեղդած պաշտօնդ, ընդվի՛գ, վէ՛ս,
 Շանթի նըման՝ որ կ'երկըննայ պողպատին,
 Գուցէ՛, գուցէ՛, ո՛վ եղբայր, դու մուլեգին
 Նըշտրակին տեղ սո՛ւրն ուզես: